„ՄՈՒՐՃ"-Ի ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼ. պ. Տէր-Ստեփանեանցին։ Ստացանք 70 կոպէկի մարկաները և ուղարկեցինք երկու գրքոյկները։

ԹԻՖԼԻՍ. պ. Գուրզէնին։ Ձեր ոտանաւորը չի տպւելու։

«ՄՈՒՐՃ»-Ի ԱՊԱՌԻԿՆԵՐ։ Մեր բաժանորդներից նոցա, որոնց վերայ մընում են ապառիկներ, խնդրում ենք բաժանորդագինը հասցնել խմբագրութեանս, առանց սպասելու երկրորդ ազդարարութեան։

ԵՐԵՒԱՆ. պ. Տ.Ս.-ին։ Ձեր աշխատակցութեան խնդրի առիթով մենք ստացանք մի նամակ Ալէքսանդրօպօլից՝ պ. Ա. Գ.-ից և Թիֆլիսում լսեցինք պ. Տ.-Մ.-ից ինչ յանձնարարած էք եղել մեզ հաղորդելու։ Բոլորը կախւած է գրւածքից։ Փորձեցէք։ Կանխօրէն խօսք չենք կարող տալ։

ԲԱՔՈՒ. պ. Մել.-Դաղ.-ին։ Ստացանք 9 ռուբլին։ Ուղարկած կտորները չեն դիմանում «Մուրճ»-ի պահանջներին։

ԵՆԱ. պ. Տիանդրին։ Ուղարկւածի տպագրութիւնը դեռ ևս չի վճռւած։ Այն, ինչ խոստանում էք նամակում՝ Գերմանական դպրոցների դրութիւնը և նպատակները—շատ հետաքրքրական է։ Թոյլ ունինք, որ յօդւածի մէջ դուրս բերւած կը լինին, ի միջի այլոց, նաև գերմանական նշանաւոր գործիչների մտքերը։

ԳԱՆՁԱԿ. պ. Նիկ.-ին։ Խորհուրդ ենք տալիս ոտանաւորներ գրելով չը զբաղւէք։ Ոտանաւոր ուղարկելուց առաջ, Դուք պէտք է լաւ թերթէիք «Մուրճ»-ի անցած համարները։

ԹԻՖԼԻՍ. պ. Բուհանին։ Կարդացէք նախընթաց տողերը։

ՇՈՒԼԱՒԵՐ. պ. Բ.-ին։ Ձեր ուղարկածը առանց կարդալու ստիպւած ենք յետ ուղարկել։ Եթէ այն ընդունէինք տպագրելու, մեր ընթերցողների գալ տարւայ միակ հաճոյքը կը լինէր կարդալ «համառօտ» նկարագիրը կրթութեան և ուսման, միջին դարերում,

ամբողջ տարի չարունակ — այնքան մեծ է Ձեր գրածքը։ Էհ, դէ սա կարելի բան է արդեօք։ Եւ վերջապէս ինչն է ստիպում մեզ այս բոպէին զբաղուել միջին դարերի կրթութեան և ուսման եղանակներով, քանի որ մենք մեծապէս կարօտութիւն ունինք նորագոյն կրթութեան և ուսման սկզբունքների հետ ծանօթանալու և կեանքի մէջ մտցնելու նոցա։ «Բնապատմութիւնը» «Մուրճ»-ում զետեղելու բան չէ, իսկ «Պօլիկուսիկ Ֆրից» մանկական «Աղբիւր» ամսագրի համար թերևս լարմար լինի և ոչ «Մուրճ»-ի համար։

ԹԻՖԼԻՍ. պ. Վ.-ին։ «Իդէալը» չի տպագրուելու։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼ. Հոգաբարձութեան սբ. Փրկիչ ուսումնարանի։ Ձեզնից ստացուեց 30 բուբլու մի ծրար այն օրը, երբ պ. Տ.-Մ. թողել էր Թիֆլիսը։ Վերադառնալուն պէս, ծրարը յանձնեցինք իրան։

ԽԱՐԿՕՎ. Հայ ուսանողներին։ Համաձայն պ. Շահվերդեանի կողմից պ. Տ. Նաւասարդեանցին յայտնած ցանկութեան, ի հաշիւ երկու բուբլու, ուղարկեցինք ձեզ մի-մի օրինակ «Ցեցեր» և «Խև-Կարապետ»։

ԿԱՐՍ. պ. բժ. Ղ.-ին։ Ստացանք 40 բուբլին։

«Դաւիթ և Մհեր» նորերումս հրատարակուած վէպի մասին խմբագրութիւնս ստացած է մի ընդարձակ քննադատութիւն այդ ժողովրդական վէպը գրի առնող պ. Աբեղեանից։ Յօդուածը կը տպւի եկող 10-րդ համարում։ Դուցէ տեղի սղութիւնը հարկադրէ մեզ յօդուածը երկու №-ներում զետեղել։ Ի նկատի առած վէպի մեծ գրական նշանակութիւնը, պ. Աբեղեանի քննադատութիւնը ներկայացնում է մեծ գրական ինտերես։ Յօդուածը միանգամայն բաւականութիւն է տալիս «Մուրճ»-ի պահանջներին։

Նոյն վէպի առիթով պ. Լէօն պատրաստած ունի նոյնպէս մի ընդարձակ գրութիւն, որին դեռ ևս սպասում է «Մուրճ»-ի խմբագրութիւնը։

Գալ №-ների համար, ի միջի այլոց, պատրաստում են յօդուածներ—պ. Գրիգոր Վարդանեան՝ Հարկերի մասին Անդրկովկասում, իսկ մի ուրիշը, որը մի քանի ամիս առաջ ստացել էր առաջարկ խմբագրութեան կողմից, պատրաստում է մի յօդուած Պանդխտութեան խնդրի մասին։

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ. Ներկայ 9-րդ №-ը լոյս է տեսնում աւելի ևս մեծ ծաւալով, քան «Մուրճ»-ի անցած համարներից ամենամեծը։ Մեր բոլոր բաժանորդներին արդէն յայտնի պէտք է լինի, որ անցած համարներից և ոչ մէկը չի ունեցել այն փոքր ծաւալը, որ պէտք է կազմէր մեր հրատարակութեան փոքրագոյն չափը։

Մեր «Հրաւէրք»-ում խոստացել էինք «Մուրճ»-ը հրատարակել 128-ից մինչև 160 երես տեսրակներով։ Մինչդեռ մինչ այժմ մենք չենք հրատարակել և ոչ մի համար 128 երեսով, այլ անցած համարներից ամենափոքրը ունեցել է 144 երես, այսինքն այնքան, որքան պէտք է ունենար մեր խոստացածի միջինը։ Դորա համեմատ, «Մուրճ»-ի ամենամեծ համարը որ պէտք է ունենար ոչ աւել, քան 160 երես, ունեցել է ոչ թէ այդքան, այլ դորանից շատ աւել, այն է՝ 196 երես, չը հաշուած լայտարարութիւնները։ Ներկայ համարը այդ չափից էլ անցնում է։

ԷՋՄԻԱԾԻՆ. պ. Ց. Ցովհաննիսեանին։ Ցանձնեցինք պ. Ս.-ին 20 բուբլու ծրարը։

«Խ և-կ ա ր ա պ է տ» վէպը այս համարում վերջանում է և լոյս տեսնում առանձին գրքով։ Գրքի երեսները «Մուրճ»-ի երեսների ծաւալն ունին։ Գինը նշանակուած է 1 բուբլի։ Տպագրուած է 800 օրինակ։ Այդ գիրքը կազմում է «Մուրճ»-ի երկրորդ հրատարակութիւնը։

Հեղինակը, Սարգիս Ատրպետեան (ծածկանուն), պատրաստել է «Մուրճ»-ի համար մի երկրորդ մեծ բոման՝ «Ակմաստ» անունով։ Կարծում ենք, որ այդ գրուածքը կը սկսենք հրատարակել նոյեմբեր ամսից, փոխանակ «Նինա» անունով բոմանի, որի տպագրութիւնը դժուարութիւնների հանդիպեց։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ